Կոռուպցիայի ընկալման համաթիվ 2025. Թույլ ինստիտուտները սնուցում են կոռուպցիան Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում

Բեռլին, 10 փետրվարի 2026թ. – Թրանսփարենսի Ինթերնեշնլի 2025թ Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ), որը հրապարակվեց այսօր, ցույց է տալիս, որ թույլ ինստիտուտները և ժողովրդավարական հետընթացն Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում խթանում են կոռուպցիան և նեղացնում քաղաքացիական տարածքը: Տարածաշրջանի ԿԸՀ-ի միջին արժեքը հավասար է 34-ի 100-ից, ընդ որում 19 երկրներից վեցի ԿԸՀ-երն էապես վատացել են, և միայն յոթի մոտ դրանք լավացել են՝ ընդգծելով վերջին տասնամյակում կանգ առած բարեփոխումները և թուլացած ինստիտուտները:

Իշխանության կենտրոնացումը, անհարկի ճնշումները դատական համակարգի նկատմամբ, և ճնշումը քաղաքացիական հասարակության վրա թուլացնում են զսպումների և հակակշիռների մեխանիզմները և հանրային վերահսկողությունը՝ դրանով իսկ խթանելով ժողովրդավարության նահանջը: Ողջ Արևմտյան Բալկանների համար ընդհանուր հիմնախնդիր է բարձրարժեք ներդրումային նախագծերի վերաբերյալ ոչ թափանցիկ ձևով որոշումների ընդունումը: Թափանցիկության առկախված կարգավորումները և չվերահսվող հայեցողական լիազորությունները ծնում են կոռուպցիոն ռիսկեր հանրային միջոցների օգտագործման հարցում՝ խարխլելով հանրային վստահությունը: Գնումների մրցակցային ընթացակարգերի բացակայությունը հանգեցրեց բնական պաշարների անվերահսկելի շահագործմանը **Բոսնիա և Հերցեգովինայում** (2025թ. ԿԸՀ համաթվի արժեքը՝ 34), **Ալբանիայի** (39) Սազան կղզու շրջակա միջավայրի քայքայման վտանգին, և թույլ տվեց **Սերբիայի** (33) կառավարությանը ստորագրելու գաղտնի պայմանագիր օտարերկրյա ներդրողի հետ և անօրինական կերպով չեղարկելու մշակութային հուշարձանի պահպանվող լինելու կարգավիճակը, որպեսզի նրա տեղում կառուցվի շքեղ հյուրանոց

Մի շարք արևմտաբալկանյան երկրներում դատական համակարգի թույլ արձագանքը հանդիսանում է կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական խոչընդոտներից մեկը, և, այդուհանդերձ, դատավորներն ու դատախազներն ավելի ու ավելի հաճախ դառնում են իշխանությունների հարձակումների թիրախ: **Սերբիայում** (33) կառավարության անդամների ենթադրյալ չարաշահումները հետաքննելուց հետո երկրի Կազմակերպված հանցավորության հարցերով դատախազությունը ենթարկվում է օրըստօրե աճող ճնշման, ներառյալ իշխանությունների կողմից ուղղորդվող զրպարտչական արշավների, ոստիկանության հետ համագործակցելուն խոչընդոտման և օրենսդրական փոփոխությունների, որոնք կթուլացնեն նրա կարողությունները՝ հետաքննելու կազմակերպված հանցավորությունը և կոռուպցիան, որում ներգրավված են բարձրաստիճան պաշտոնյաները: **Հյուսիսային Մակեդոնիայում** (40), քրոնիկ թերֆինանսավորումը և իշխանությունների շարունակական ճնշումը թուլացրեցին երկրի դատախազությունը: Այդ ամենի գագաթնակետը դարձավ երկրի գլխավոր դատախազի հրաժարականը 2025 թվականի դեկտեմբերին: **Բոսնիա Հերցեգովինայում** (34) դատական համակարգում պաշտոններին նշանակումների վրա քաղաքական ազդեցությունն այնքան խորն է արմատավորված, որ այն արդյունավետ կերպով կարգավորելու բազմաթիվ փորձերը տապալվեցին, չնայած նրան, որ դա խոչընդոտում է երկրի ինտեգրմանը ԵՄ-ին:

Տարածաշրջանի տարբեր երկրներում իշխանություններն ավելի ու ավելի են սահմանափակում քաղաքացիական տարածքը և անկախ վերահսկողությունը՝ թույլ տալով կոռուպցիոն ռիսկերի աճին: **Վրաստանում** (50), ժողովրդավարության նահանջը մեծացնում է այդ ռիսկերը: Իշխող կուսակցությունը խորհրդարանով անցկացրեց օրենքներ, որոնք քրեականացնում են հասարակական կազմակերպությունների իրավաչափ գործունեությունը և պիտակավորում են անկախ ձայները որպես «օտարերկրյա գործակալներ», որոնք զուգակցվում են քաղաքական դրդապատճառներով քրեական հետապնդումներով, լրատվամիջոցների վրա դրվող սահմանափակումներով, և ցուցարարների ու լրագրողների նկատմամբ բռնի հաշվեհարդարներով՝ դրանով իսկ վերացնելով հաշվետվողականությունը: Միջազգային դիտորդներն այժմ զգուշացնում են երկրի՝ դեպի ավտորատարիզմ շրջադարձի մասին, որը ներառում է քայլեր ուղղված ընդդիմադիր կուսակցություններն արգելելուն և քաղաքացիական ծառայության, ոստիկանության ու դատական համակարգի նկատմամբ քաղաքական հսկողությունն ուժեղացնելուն:

Բռնաճնշումների նմանատիպ օրինաչափություններ տեղ են գտնում նաև Կենտրոնական Ասիայում. **Ղրղզստանը** (26) և **Ղազախստանը** (38) շարունակում են սահմանափակել քաղաքացիական հասարությանը՝ հասարակական կազմակերպությունների վերաբերյալ խրթին օրենսդրության միջոցով: Ընդ որում Ղազախստանում ուժեղացել են մտահոգությունները կապված հակակոռուպցիոն ծառայության ոչ թափանցիկ ճանապարհով լուծարման և նրա գործառույթներն Ազգային անվտանգության կոմիտեին փոխանցելու հետ, որն առաջացնում է հարցեր անկախության, հաշվետվողականության և վերահսկողության վերաբերյալ: **Ուզբեկստանում** (31), օրենսդրական բարեփոխումները հանգեցրել են որոշակի առաջընթացի, սակայն կոռուպցիոն երևույթներ վեր հանող լրագրողները և բլոգերներն այսօր էլ բախվում են հալածանքների կամ քրեական հետապնդման, որը սահմանափակում է հակակոռուպցիոն քայլերի ազդեցությունը:

Լրատվամիջոցներին, քաղաքացիական հասարակությանը և քաղաքական ընդդիմությանը ճնշող իր ամբողջովին կենտրոնացված և ոչ թափանցիկ կառավարման համակարգով **Ռուսաստանը** (22) շարունակում է մնալ ԿԸՀ դասակարգման աղյուսակի հատակին մոտ: Նրա ավտորիտար գործելակերպը խեղդում է անկախ ձայները, սահմանափակում քաղաքացիական ներգրավվածությունը և տարածում է կոռուպցիոն գործելաոճը տարածաշրջանում՝ խարխլելով հարևան երկրների ժողովրդավարական ինստիտուտները:

Չնայած այս մարտահրավերներին՝ որոշ երկրներ ցույց են տալիս, որ փոփոխությունն իրագործելի է երբ քաղաքացիական տարածքը և անկախ ինստիտուտները պաշտպանված են: **Ուկրաինայում** (36), հասարակական կազմակերպությունների, հանրության և լրագրողների կողմից գործադրված ճնշումն նպաստեց կառավարման ոլորտում բարեփոխումների առաջմղմանը: 2025 թվականին քաղաքացիական հասարակության մոբիլիզացիան պաշտպանեց հակակոռուպցիոն առանցքային մարմիններին՝ ապահովելով նրանց անկախությունը: Ուկրաինայի մասնագիտացված հակակոռուպցիոն կառույցների համակարգը մեծացրեց հետաքննությունների ծավալը և նրան հաջողվեց հասնել մեղադրական դատավճիռների կայացմանը, ներառյալ քաղաքականապես զգայուն գնումների և պաշտպանության ոլորտներում: Սակայն, անհրաժեշտ են հետագա բարեփոխումներ՝ զերծ

պահելու չարաշահումներից պաշտպանության և վերակառուցման նպատակով ստեղծված հիմնադրամները:

Նմանապես, **Մոլդովան** (42) ուժեղացնում է դատական վեթինգը և առաջ է տանում ԵՄ չափորոշիչներին համապատասխան բարեփոխումները՝ չնայած աշխարհաքաղաքական ուժեղ ճնշումներին և երկրում արմատավորված շահեր ունեցող խմբերի մշտական դիմադրությանը: Չնայած կիրարկման հետ կապված մարտահրավերները մնում են, քաղաքական կամքի առկայությունը և կառուցվածքային բարեփոխումները Մոլդովային դարձնում են ուշադրության արժանի երկիր: **Հայաստանն** (46) ընդունեց միջազգային չափանիշներին համապատասխանող հակակոռուպցիոն օրենսդրություն և ռազմավարություն: Նրա հետագա առաջընթացն այժմ կախված է դատական և դատախազական համակարգերի անկախությունից և արդյունավետությունից՝ ընդունված բարեփոխումների հետևողական կիրարկման պայմաններում:

Ինչպես նշում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի Արևելյան և Հարավային Եվրոպայի գծով տարածաշրջանային խորհրդատու Լիդիա Պրոկիչը.

«Կոռուպցիան Արևելյան և Հարավային Եվրոպայում անխուսափելի չէ. այն ծաղկում է այնտեղ, որտեղ ժողովրդավարությունը թուլացած է և հաշվետվողականությունը՝ տապալված: Իշխանությունները պետք է շտապ ուժեղացնեն դատական համակարգի անկախությունը, պաշտպանեն քաղաքացիական տարածքը և ապահովեն հանրային մարմինների թափանցիկությունը: Հակառակ դեպքում կառաջանա վտանգ, որ քաղաքացիները կդառնան խոցելի պաշտոնեական արմատացած չարաշահումների նկատմամբ: »

Կոռուպցիան տարածաշրջանում. հիմնական եզրահանգումներ

Կոռուպցիայի ընկալման համաթիվը դասակարգում է 182 երկիր և տարածք՝ ըստ հանրային հատվածում կոռուպցիայի ընկալվող մակարդակի՝ 0-ից (խիստ կոռումպացված) մինչև 100 (շատ մաքուր) սանդղակով:

- **Թուրքմենստանը** (17), **Տաջիկստանը** (19) **և Ռուսաստանը** (22) ԿԸՀ 2025 համաթվի ամենացածր արժեքներ ունեցող երկրներն են՝ արտացոլելով այդ երկրներում ժողովրդավարական թույլ ինստիտուտները և բռնաճնշումների բարձր մակարդակը:
- Թափանցիկության ցածր մակարդակը և թերի բարեթոխումները խարխլում են առաջընթացը: Արևմտյան Բալկանների և Կենտրոնական Ասիայի շատ երկրներում հապճեպ կամ թերի իրականացված բարեփոխումները, լրագրողների և հասարակական կազմակերպությունների նկատմամբ բռնաճնշումները, և որոշումների ընդունման ոչ թափանցիկ մեխանիզմները սահմանափակում են հակակոռուպցիոն ոլորտում գործադրված ջանքերը:
- **Վրաստանի** (50) օրինակը ցույց է տալիս, թե ինչպես է ժողովրդավարության նահանջը սնուցում կոռուպցիան: Քաղաքական դրդապատճառներով քրեական հետապնդումները, լրատվամիջոցների դեմ կիրառվող սահմանափակումները, հասարակական կազմակերպություններին թիրախավորող օրենքները և պետության

զավթումը վերնախավերի կողմից թուլացրել են հանրային վերահսկողությունը՝ ձևավորելով մի միջավայր, որում կոռուպցիան կարող է ծաղկել:

- Ուժեղ քաղաքացիական հասարակությունը և անկախ կառույցները, որոնք առկա են **Ուկրաինայում** (36) և **Մոլդովայում** (42), կարող են խթանել իմաստալից հակակոռուպցիոն բարեխոխումները՝ չնայած գյուղություն ունեցող մարտահրավերներին: